

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգրք) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում դրանց ընդունման պահից ի վեր կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք առավելապես պայմանավորված են եղել իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ և հասարակական հարաբերությունների զարգացման պահանջով:

Օրենսգրքի կիրառման և հասարակական հարաբերությունների զարգացման արդյունքում պարբերաբար շարունակում են ի հայտ գալ տարբեր խնդիրներ ու օրենսդրական բացեր: Մասնավորապես՝ դատավարական տարբեր ինստիտուտների ոչ բավարար հստակությունը, ընթացակարգային նորմերի անորոշությունները, ինչպես նաև իրավական նորմերի տարընկալումները հանգեցրել են որոշ դեպքերում ոչ միատեսակ և երբեմն հակասական իրավական լուծումների, որոնց մի մասը հստակեցվել է Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով: Միաժամանակ, առանձին կարգավորումներ այլևս չեն համապատասխանում հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումներին և արդյունավետ չեն, ինչպես նաև արդիական է դատավարական ընթացակարգերի պարզեցման և վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն ուղղված արդյունավետ դատավարական գործիքակազմեր ներդնելու անհրաժեշտությունը:

Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու առաջնահերթությունը միաժամանակ պահանջում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով որոշակի տեսակի իրավախախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու հարցերի քննությունը վերապահել համապատասխան ոլորտում մասնագիտացված վարչական մարմիններին՝ դատական վերահսկողության առարկա գործերը սահմանափակելով առավել բարդ դեպքերով:

Նման պայմաններում մի շարք ինստիտուտներ դեռևս պահանջում են շարունակական վերանայում և կատարելագործում՝ հաշվի առնելով ոլորտի նկատմամբ աճող պահանջարկը, հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացումն ու հանրային վստահությունն ապահովելու ու ամրապնդելու անհրաժեշտությունը:

Մասնավորապես.

1. իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են այն դեպքերը, երբ ինչպես վարչական մարմինների, այնպես էլ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից իրենց իրավունքներն իրացնելու պատրվակով ստեղծվում են պատշաճ դատաքննության և ողջամիտ ժամկետներում գործն ըստ էության լուծող դատական ակտեր կայացնելու խոչընդոտներ: Մինչդեռ Օրենսգիրքը դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը որպես դատավարական սկզբունք չի ամրագրում:

Նախագծով առաջարկվող կարգավորման համատեքստում, հարկ ենք համարում ընդգծել, որ դատավարական օրենսդրությամբ ընդհանրապես, իսկ Նախագծով, մասնավորապես, դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգին առնչվող հարաբերություններ են կարգավորվում: Իրավունքի չարաշահման իրավական բովանդակությունը բացահայտված է տարբեր իրավական ակտերով: Այս համատեքստում կարելի է դիտարկել օրինակ Սահմանադրության 39-րդ հոդվածը, որի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե դատական սանկցիայի ենթակա անձը չարաշահում է սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավունքը և արտահայտվելու իրավունքն օգտագործում է դատական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարքը շարունակելու կամ նոր արարք կատարելու համար, ապա դատավորն իրավասու է այդ անձի նկատմամբ կիրառելու առավել խիստ դատական սանկցիա: Վերոնշյալի բովանդակային ուսումնասիրությունը վկայում է, որ դատավարական օրենսդրությամբ իրավունքի չարաշահումը կարող է դրսևորվել դատավարական տարբեր իրավունքներից օգտվելու ոչ իրավաչափ ձևերով, որոնք կարող են հետապնդել տարբեր նպատակներ: Ուստի և, Նախագծով առաջարկվող կարգավորումն արդարացիորեն կարող է հավասարակշռել մի կողմից իրավունքի չարաշահման դեպքերը, իսկ մյուս կողմից օրենսդրությամբ չսահմանափակել գործնականում առաջացող իրավունքի չարաշահման տարբեր ձևերը: Միևնույն ժամանակ, հարկ է հատուկ նկատել, որ Նախագծով առաջարկվող համանման կարգավորում այժմ արդյունավետորեն գործում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որպիսի հանգամանքը դատավարական օրենսդրությամբ բարեփոխումների շրջանակում հաշվի առնվող կարևոր հանգամանք է:

2. Օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը հայցվորին ուղարկելու հետ միաժամանակ վարչական դատարանն ուղարկում է նաև հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, որը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացնում վարչական դատարանի համար:

3. Օրենսգրքի 79-րդ հոդվածը չի պարունակում դատարան դիմելու իրավունքի չարաշահման այն դեպքերը կանխելու գործիքակազմ, երբ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման բողոքարկված լինելու պայմաններում կրկին ներկայացվում է բովանդակային նույն հայցադիմումը, և վարչական դատարանը ստիպված է լինում դրա վերաբերյալ կրկին որոշում կայացնել՝ անկախ նախկինում կայացված որոշման՝ վերադասության կարգով բողոքարկված լինելու հանգամանքի: Մասնավորապես, խնդիրը կայանում է նրանում, որ երբ հայցադիմումում մատնանշված թերությունների վերաբերյալ դատարանի

միջանկյալ դատական ակտի բողոքարկման պայմաններում նույն հայցադիմում՝ նույն թերություններով ներկայացվում է անհրաժեշտ է լինում նույն գործող կայացնել որոշումներ: Ընդ որում, դատավարական օրենսդրությամբ փոփոխություններ կատարելիս շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքում վեր են հանվում այնպիսի դեպքերը, երբ անձինք տարբեր պատճառներով դատարան դիմելու իրավունքի չարաշահմամբ նույն հայցադիմումը նույն թերություններով ներկայացնում են դատարան, ընդ որում, նման դեպքերի կանխումը առավել կարևորվում է, երբ հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հետ զուգահեռ այն նույն թերություններով ներկայացվում է վարչական դատարան և մինչև նոր ներկայացված հայցադիմումի վերաբերյալ Օրենսգրքով սահմանված կարագով որոշում կայացնելը կրկին նույն թերություններով նոր հայցադիմում է ներկայացվում: Արդյունքում ստացվում է, որ դատարանը մի գործով իրավունքի չարաշահման դեպքերը բացառելու օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում ստիպված է լինում մի քանի որոշումներ կայացնել: Բացի նշվածից, եթե դիտարկվի այն դեպքերը, երբ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկված լինելուն զուգահեռ թերությունները շտկված նոր հայցադիմում է ներկայացվում, ապա հարկ է նկատել, որ իրավունքի իրացման առնչությամբ Նախագիծը կարգավորումներ չի նախատեսում: Այլ կերպ ասած, բողոքարկման իրավունքի իրացմանը զուգահեռ դատարանի կողմից մատնանշված թերությունները շտկված նոր հայցադիմում դատարան ներկայացնելու իրավունքը երաշխավորվում է, սակայն նոր ներկայացված հայցադիմումի վերաբերյալ իրավական հետևանքները տարբեր կարող են լինել: Այսպես, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն հարցադրման, թե արդյո՞ք հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները վերացնելը և այն դատարան կրկին ներկայացնելը բացառում են հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքով բողոքարկելու իրավունքն իրացնելու հնարավորությունը, արձանագրել է. «(...) Այսինքն, օրենսդիրը սահմանել է այն իրավական հետևանքները, որոնք վրա են հասնում՝ կախված այն հանգամանքից, թե որքանով է վերաքննիչ բողոք բերած անձն իր վերաքննիչ բողոքարկման իրավունքն իրականացրել օրենքին համապատասխան: Ըստ այդմ էլ՝ ներկայացված վերաքննիչ բողոքի նկատմամբ կարող են կայացվել տարբեր դատավարական հետևանքներ ունեցող որոշումներ՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշում: (...)» Հայցադիմումն օրենքով նախատեսված ցանկացած այլ հիմքով վերադարձվելու դեպքում վերաքննության կարգով հիշյալ միջանկյալ դատական ակտը բողոքարկելու դատական պաշտպանության դիմած անձի իրավունքը երաշխավորվում է նաև այն դեպքում, երբ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները վերացնելուց հետո այն սահմանված ժամկետում կրկին ներկայացվում է դատարան: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված գործողությունների կատարումը չի բացառում դատական պաշտպանության դիմած անձի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմանը համաձայն չլինելու դեպքում այն վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը: Նման եզրահանգումը նախ պայմանավորված է նրանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հայցադիմումը վերադարձնելու

մասին որոշումն ստանալու պահից եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացնելը և այն դատարան կրկին ներկայացնելը հայցվորի իրավունքն է, որը բողոքարկման իրավունքի համեմատ չունի բացառող նշանակություն: (...)»:¹ Վերոնշյալի լույսի ներքո՝ Նախագծով նախատեսված կարգավորմամբ չի սահմանափակվի անձանց միջանկյալ դատական ակտը բողոքարկելու իրավունք, ավելին՝ այն չի անդրադառնում բողոքարկման պայմաններում ներկայացված հայցադիմումի վերաբերյալ կայացվող որոշումներին կամ իրավական հետևանքներին, որոնք կարող են առաջանալ: Ընդ որում, նույնանման կարգավորում արդյունավետորեն գործում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Այսպիսով, Նախագծով առաջարկվող կարգավորմամբ կկանոնակարգվեն հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման բողոքարկման պայմաններում թերությունները վերացված և կրկին ներկայացված հայցադիմումի վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակահատվածը, ինչը հնարավորություն կընձեռի կանխատեսելի ընթացակարգի միջոցով օրինական որոշում կայացնել:

4. Օրենսգրքի 82-րդ հոդվածը չի նախատեսում վարչական դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող՝ միևնույն առարկային վերաբերող մի քանի գործ միացնելու հնարավորություն, ինչը խոչընդոտում է գործերի արդյունավետ և արագ քննությանը:

5. Օրենսգրքի 83-րդ և 91-րդ հոդվածները սահմանում են վարչական ակտի կատարումը կասեցնելու և հայցի ապահովման տարբեր միջոցներ կիրառելու հնարավորություն, մինչդեռ նախատեսված չեն դրանց կիրառման անհրաժեշտությունը նաև հանրային շահերի տեսանկյունից գնահատելու մասին օրենսդրական պահանջ: Այդուհանդերձ, որոշ դեպքերում վարչական ակտի կատարումը կասեցնելը կամ հայցի ապահովման միջոց կիրառելը կոնկրետ անձի համար անհրաժեշտ և հիմնավորված լինելով հանդերձ՝ կարող է հակասել հանրային շահերին կամ վտանգի տակ դնել դրանք:

6. Օրենսգրքի 96-րդ հոդվածը նախատեսում է հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանի կողմից դատական նիստ հրավիրելու պարտականություն, որն անհարկի ձգձգում է դատավարության ընթացքն ու երբեմն կրում է ձևական բնույթ: Հայցից հրաժարվելու մասին դիմում ներկայացվելու դեպքում դատական նիստ հրավիրելու՝ գործող կարգավորման նպատակը հայցից հրաժարվելու մասին հայցվորի դիմումը քննելը, հայցվորին իր գործողության հետևանքները պարզաբանելը և մեկ անգամ ևս նրա մտադրության հավաստիության մեջ համոզվելն է (տե՛ս Սահմանադրական դատարանի 02.10.2018 թվականի թիվ ՍԴՌ-1427 որոշումը): Մինչդեռ իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի և փաստաբանի դեպքում կարևոր նշանակություն ունի նրանց՝ որպես պրեֆուսիոնալ սուբյեկտ հանդես գալու հանգամանքը, որպիսի պայմաններում հատուկ սուբյեկտային այդ կազմի դեպքում բացակայում է Վարչական դատարանի կողմից նշված գործողությունները կատարելու անհրաժեշտությունը: Նույն

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԴ2/15602/02/23 քաղաքացիական գործող կայացված որոշումը:

տրամաբանությամբ համանման կարգավորումներ պարունակում է նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 10-րդ մասը.

7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ և 173.2-րդ հոդվածներով նախատեսված՝ առևտրի, հանրային սննդի, սահմանափակման ենթակա և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ դրանց օգտագործման սահմանափակման արգելքը խախտելու վերաբերյալ վարչական իրավախախտումների գործերով վարչական դատարանն իրականացնում է բանավոր դատաքննություն, մինչդեռ դրանք կարող են արդյունավետորեն քննվել նաև գրավոր ընթացակարգով՝ այն երաշխիքների պահպանմանը զուգընթաց, որոնք պետք է ձեռնարկվեն արդար դատաքննության իրավունքի պատշաճ պահպանման համար.

8. Օրենսգրքի 18-րդ գլխով նախատեսված է վիճարկման հայցերով որոշակի տեսակի գործերի՝ գրավոր ընթացակարգով քննելու կարգավորում: Գործերի քննության գրավոր ընթացակարգն ուղղված է վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը, ինչպես նաև գործերի արագ և արդյունավետ քննությանը, մինչդեռ Օրենսգիրքը չի կարգավորում դատավարական գործողությունների իրականացման, վարչական դատարանի կողմից վճիռ հրապարակելու, ինչպես նաև դրանց ժամկետների հետ կապված մի շարք հարցեր.

Մասնավորապես, Նախագծով առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական դատարանի կողմից գրավոր ընթացակարգով քննվող գործերի 2 տեսակ է առանձնացվում Օրենսգրքով: Ըստ այդմ, Օրենքի 117-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանում վիճարկման հայցերով գործերի քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.7-րդ, 129.2-րդ, 131-րդ, 135.2-րդ և 137.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը՝ անկախ ներկայացված հայցատեսակից, իրականացվում է գրավոր ընթացակարգով: Նշված հոդվածի 1-ին և 1.1-ին մասերի միջև հիմնական տարբերություն հանգում է հայցատեսակով պայմանավորված գործերի քննությանը: Հետևապես, առաջարկվող կարգավորումն Օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1 մասում կատարելը պայմանավորված է նշված իրավախախտումներով ներկայացված հայցատեսակների տարբերությամբ:

9. Օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված է արագացված դատաքննություն կիրառելու հնարավորություն: Վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակում հնարավոր է գործնականում հասնել իր իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը: Մինչդեռ գործնականում պատահում են դեպքեր, երբ հայցվորը դատարան է դիմում ոչ ճիշտ հայցատեսակով, որպիսի դեպքում գործի փաստական

հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքը պահանջում է վարչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ մատնանշելու պարտականություն: Այդուհանդերձ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա վարչական դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Նման պայմաններում, եթե հայցվորը (դիմողը) իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգմանը ցանկանում է հասնել այնպիսի պահանջով, որը չի համապատասխանում օրենքով սահմանված հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, ապա առաջանում է գործի քննության արդյունավետ գործիքակազմ նախատեսելու անհրաժեշտություն, որը հնարավորություն կտա վարչական դատարանին արագ քննել գործը՝ առանց լրացուցիչ գործողություններ կատարելու պարտավորության:

10. Օրենսգրքի ներկայիս կարգավորումներից հետևում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է փոփոխել բողոքարկվող գործն ըստ էության լուծող դատական ակտի պատճառաբանությունները միայն այն դեպքում, երբ մերժում է դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը, այսինքն՝ երբ պարզում է, որ թեև դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բողոք բերած դատավարության մասնակցի համար իրավացիորեն անբարենպաստ լուծում է տվել, սակայն այդ լուծումը սխալ կամ թերի է պատճառաբանել:

Միաժամանակ, այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը բավարարվում է վերաքննիչ դատարանի կողմից, վերջինս օժտված չէ բողոքարկվող դատական ակտի բացառապես պատճառաբանական մասի վերաբերյալ բողոքների քննության իրավասությամբ: Այս պարագայում ստացվում է մի իրավիճակ, որ ըստ էության ճիշտ լուծում ստացած դատական ակտերը երբեմն կարող են մնալ թերի կամ սխալ պատճառաբանված, ինչը չի բխում արդարադատության էությունից, չի ապահովում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, քանի որ նշված իրավունքները ենթադրում են ոչ միայն դատարանի դիմելու և վեճի լուծում ստանալու, այլև ճիշտ և ամբողջական պատճառաբանված դատական ակտ ունենալու հնարավորություն:

11. Սահմանադրական դատարանը 02.03.2021 թվականի թիվ ՍԴՈ-1579 որոշմամբ Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով վերաքննիչ դատարանին լիազորություն չի վերապահում բավարարելու վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, ճանաչել է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր: Օրենսգրքի 146-րդ հոդվածով սահմանված կարգավորումների պայմաններում վերաքննիչ դատարանը ստիպված է լինում լրացուցիչ պատճառաբանել իր որոշումն անգամ այն պայմաններում, երբ վարչական դատարանի կողմից հաստատված ու վերաքննիչ բողոքում վիճարկված փաստերի կապակցությամբ հանգում է այն եզրակացության, որ վարչական դատարանը համապատասխան փաստերի մասով սխալ թույլ չի տվել, և առկա չէ դատական ակտն

ամբողջությամբ պատճառաբանելու կամ թերի պատճառաբանված դատական ակտը մասնակի պատճառաբանելու անհրաժեշտություն.

12. Օրենսգրքի 148-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին վերաքննիչ դատարանի որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց հինգ օր հետո, եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք չի ներկայացվում: Նշված իրավակարգավորումը գործնականում խնդիրներ է առաջացնում դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու տեսանկյունից, քանի որ տարբեր անձանց կողմից դրանց դեմ շարունակաբար ներկայացվող բողոքները խոչընդոտում են այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելուն.

13. Օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի և վերաքննիչ դատարանում բողոքարկված՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները քննելու երկամսյա ժամկետ, որը Վճռաբեկ դատարանի սահմանադրական դերի հաշվառմամբ երբեմն բավարար չէ բողոքների քննությունն արդյունավետորեն իրականացնելու համար: Համեմատության կարգով կարելի է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածով նախատեսված է միջանկյալ դատական ակտի դեմ վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի կողմից քննելու եռամսյա ժամկետ: Ընդ որում, հարկ է նկատել, որ 3-ամսյա ժամկետը սահմանելը չի խոչընդոտում դատարանին գործը քննել և առավել շուտ ժամկետում որոշում կայացնել, իսկ դատարանը՝ 3 ամսյա ժամկետում որոշում կայացնելու դեպքում պետք է առաջնորդվի դրա առավել բարդ լինելու հանգամանքով:

14. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթը կարգավորող իրավանորմերն ունեն հստակեցման և դրանց հետ փոխկապակցված այլ իրավանորմերի հետ համապատասխանեցման անհրաժեշտություն. Օրենսգիրքը չի նախատեսում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումի ընդունումը մերժելու կամ այն առանց քննության թողնելու հիմքեր, որպիսի օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում դատարանները հարկադրված են դրանք ընդունել վարույթ և կայացնել եզրափակիչ դատական ակտեր, ինչը պահանջում է լրացուցիչ ժամանակ և ռեսուրսներ՝ անհարկի ծանրաբեռնելով դատարաններին: Համեմատության համար պետք է նշել, որ այդպիսի օրենսդրական գործիքակազմեր սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 423-րդ հոդվածով.

15. Օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա վերաքննության կարգով անմիջականորեն բողոքարկել նույն օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով քննվող՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը, մինչդեռ Սահմանադրական դատարանը 16.04.2024 թվականի թիվ ՍԴՈ-1725 որոշմամբ արձանագրել է, որ նման բողոքարկման առկայությունն անհրաժեշտություն է՝ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում՝ հաշվի առնելով դրա վարույթային բնույթն ու դրանով վրա հասնող հետևանքները:

Արդյունքում Սահմանադրական դատարանը գտել է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում օրենսդրի կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին միջանկյալ դատական ակտը վերաքննության կարգով անմիջական բողոքարկման օրենսդրական հնարավորություն չնախատեսելը համահունչ չէ Սահմանադրությամբ երաշխավորված անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին, և Օրենսգրքի 195-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչել է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

16. Օրենսգրքի գործող կարգավորումների պայմաններում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը վարչական դատարանը քննում է կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով: Հարկ է նկատել, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ Օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը վարչական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը վարչական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը: Այս առումով պետք է նշել, որ բանավոր դատաքննության ընթացքում կարող են ի հայտ գալ բազմաթիվ իրավիճակներ, երբ 5 դատավորից բաղկացած կոլեգիալ կազմից տարաբնույթ պատճառներով դատավորներից մեկը կամ մի քանիսը կոնկրետ գործի քննության պահին բացակայեն, օրինակ՝ միանձնյա կարգով տվյալ դատավորի վարույթում գտնվող մեկ այլ դատական գործի քննություն իրականացնելու համար, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում գործուղման, արձակուրդի կամ վերապատրաստման մեջ գտնվելու հանգամանքներով պայմանավորված: Նման պայմաններում առաջ է գալիս բացակայող դատավորին փոխարինելու հարց, ինչն իր հերթին հանգեցնում է դատական գործերի քննության անհարկի ձգձգման: Ընդ որում՝ Օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված գործեր քննելու նպատակով ձևավորված դատական կազմի բացակայող դատավորին անհրաժեշտության դեպքում փոխարինելու հարցը (հետևաբար՝ փոխարինող դատավորի հարցը) յուրաքանչյուր դեպքում որոշում է դատարանի նախագահը: Տվյալ դեպքում դատական կազմի բացակայող դատավորին կարող է փոխարինել նաև տվյալ դատարանի նախագահը:

17. Ներկայումս վարչական դատարանի քննությանն են վերապահված նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 172.3-րդ, 182-րդ և 189³-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու գործերը, որոնց մեծաքանակության պայմաններում անհրաժեշտ է ստեղծել նմանօրինակ գործերի պատշաճ և արագ քննության, ինչպես նաև դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելուն ուղղված արդյունավետ կառուցակարգեր:

18. Հաշվի առնելով, որ գործող Վարչական դատավարության օրենսգրքի 64.3 հոդվածով սահմանվում են այն սուբյեկտները, որոնք հանդիսանում են 2025 թվականի օգոստոսի 25-ին գործարկված վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի պարտադիր օգտատարեր՝ հարց է առաջանում հայցադիմումը Վարչական դատարան թղթային եղանակով ներկայացնելու իրավունք ունեցող ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող հայցերի՝ համակարգ մուտքագրման և տվյալ գործերը դատարանի գրասենյակի միջոցով էլեկտրոնային դարձնելու մասով:

Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված են մի շարք սուբյեկտներ (իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, վարչարարություն իրականացնող մարմինները, դրանց պաշտոնատար անձինք, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, արտոնագրված հաշտարարները և նոտարներ և այլն), որոնք պարտավոր են համակարգից օգտվել էլեկտրոնային եղանակով:

Ապահովելու համար նշյալ սուբյեկտների օրենսդրական պարտականության կենսագործման հնարավորությունը՝ այն վարչական գործերը, որոնցով ֆիզիկական անձինք ներկայացնում են թղթային հայցադիմումներ, Վարչական դատարանի գրասենյակի կողմից սկանավորման եղանակով դարձվում են էլեկտրոնային և մուտքագրվում են համակարգ: Արդյունքում՝ բոլոր դատական գործերը դառնում են էլեկտրոնային՝ Օրենսգրքով նախատեսված բացառությունների հաշվառմամբ: Նախագծով առաջարկվում է առավել հստակեցնել այս գործընթացի իրավական կարգավորումը՝ հստակ ամրագրելով, որ այսուհետ յուրաքանչյուր վարչական գործի շրջանակներում Վարչական դատարանը գործը վարում է էլեկտրոնային եղանակով:

Բացի այդ վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի գործարկմամբ պայմանավորված պրակտիկայում առաջացել են մի շարք խնդիրներ, որոնք ևս պահանջում են լուծում՝ հիմնականում տեխնիկական բնույթի: Օրինակ, մի շարք դեպքերում պետական մարմինների կողմից հնարավոր չի լինում Համակարգի միջոցով ներկայացնել դատավարական փաստաթղթերը կողմին ուղարկելը հավաստող ապացույցի սկանավորված տարբերակը՝ պայմանավորված հիբրիդային փոստի կիրառմամբ, կամ պետական տուրքը վճարվում է այլ համակարգով և հնարավոր չի լինում դատարանին ներկայացնել պատշաճ ապացույցը: Մեկ այլ խնդիր է, երբ անհրաժեշտ է ծանուցումներն իրականացնել այն դեպքերում, երբ Օրենսգրքով գործի քննության հատուկ ժամկետներ են նախատեսված: Գործող կարգավորումների համաձայն՝ դատական ծանուցագիրը համարվում է Համակարգն օգտագործող անձի կողմից ստացված այն իրեն հասանելի դառնալու պահից երեք աշխատանքային օր հետո: Նման կարգավորումը խնդիրներ է առաջացնում պատշաճ ծանուցման և դատական նիստին ներկայանալու հնարավորության տեսանկյունից հատուկ վարույթների պարագայում, որոնց դեպքում գործում են գործի քննության շատ սեղմ ժամկետներ, օրինակ՝ հավաքների վերաբերյալ գործերով, ընտրական և այլն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Օրենսգրքի, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի կիրառման արդյունքում հավաքագրված գործնական խնդիրների և բացերի լուծման նպատակով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել Օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համապատասխան հոդվածներում:

Առաջարկվող փոփոխությունները և լրացումները հանգում են հետևյալին.

1. Օրենսգրքով դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունն ամրագրվել է որպես վարչական դատավարության սկզբունք՝ նախատեսելով դատավարական իրավունքների չարաշահման դեպքում դրանց համաչափ դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ կիրառելու հնարավորություն.

2. Օրենսգրքի 79-րդ հոդվածում վերանայվել է հայցադիմումը վերադարձնելու որոշման հետ հայցվորին վերադարձման ենթակա փաստաթղթերի ցանկը՝ նախատեսելով վարչական դատարանի կողմից հայցադիմումի հետ մեկտեղ միայն առերևույթ սխալներ պարունակող փաստաթղթերի բնօրինակներն ուղարկելու պարտականություն.

3. Օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսվել է, որ կրկին ներկայացված հայցադիմումի վերաբերյալ վարչական դատարանը որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման արդյունքում դատական ակտ կայացվելուց հետո:

4. Օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսվել է վարչական դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող գործերը միացնելու հնարավորություն, ինչպես նաև կարգավորվել են դրա իրականացման կարգն ու պայմանները.

5. Օրենսգրքի 83-րդ և 91-րդ հոդվածներով վարչական դատարանի համար նախատեսվել է վարչական ակտի կատարումը կասեցնելիս և հայցի ապահովման միջոց կիրառելիս նաև հանրային շահով առաջնորդվելու պարտականություն.

6. հայցվորի և նրա ներկայացուցչի սուբյեկտով պայմանավորված՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 10-րդ մասի նմանությամբ Օրենսգրքի 96-րդ հոդվածում նախատեսվել է հայցից հրաժարվելու դիմումի հիման վրա, առանց դատական նիստ հրավիրելու գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու հնարավորություն՝ նկատի ունենալով, որ իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի և փաստաբանի համար բացակայում է համապատասխան դատավարական գործողության կատարման հետևանքները պարզաբանելու անհրաժեշտությունը.

7. Օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասում գրավոր ընթացակարգով քննվող գործերի ցանկում ներառվել են նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ և 173.2-րդ հոդվածներով նախատեսված գործերը, ինչը կնպաստի այդ գործերի արագ ու արդյունավետ քննությանը՝ միաժամանակ նվազեցնելով նաև վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը.

8. Օրենսգրքի 118-րդ և 118.1-ին հոդվածներով կարգավորվել են գրավոր ընթացակարգով գործերի քննության ընթացքում վարչական դատավարության մասնակիցների կողմից իրականացման ենթակա գործողությունների, ժամկետների, ինչպես նաև վարչական դատարանի կողմից վճռի հրապարակմանը վերաբերող հարցեր.

9. Նախատեսվել է արագացված դատաքննություն կիրառելու ևս մեկ հիմք, այն է՝ հայցվորը (դիմողը) դատարան է դիմել ոչ ճիշտ հայցատեսակով, և ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինելու վերաբերյալ վարչական դատարանի մատնանշումից հետո հայցվորը (դիմողը) այն չի փոխարինել պատշաճ հայցատեսակով: Նշվածը կնպաստի գործի արագ ու արդյունավետ լուծմանը՝ նաև նվազեցնելով վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը.

10. Սահմանադրական դատարանի 02.03.2021 թվականի թիվ ՍԴՈ-1579 որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասով և 169-րդ հոդվածի 1-ին մասով վերաքննիչ դատարանին և վճռաբեկ դատարանին վերապահվել են բողոքը բավարարելու դեպքում առանց դրա եզրափակիչ մասին անդրադառնալու դատական ակտի պատճառաբանական մասը փոփոխելու լիազորություն.

11. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվել է, որ վերաքննիչ դատարանը կարող է առանց լրացուցիչ պատճառաբանությունների հղում կատարել բողոքարկված դատական ակտի իրավական հիմնավորումներին և պատճառաբանություններին այն դեպքում, երբ իր որոշման պատճառաբանական մասում, ի թիվս այլնի, անդրադառնում է վարչական դատարանի կողմից հաստատված այն փաստերին, որոնք վիճարկվել են վերաքննիչ բողոքով, սակայն վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ փաստերի վերաբերյալ վարչական դատարանը սխալ չի թույլ տվել: Միևնույն ժամանակ, վերաքննիչ դատարանը կարող է կիրառել այս մոտեցումը միայն այն դեպքում, երբ չկա դատական ակտը ամբողջությամբ կամ մասնակի պատճառաբանելու անհրաժեշտություն՝ բացթողումների կամ թերի հիմնավորման պատճառով.

12. Օրենսգրքի 148-րդ հոդվածում որոշակիացվել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին վերաքննիչ դատարանի որոշումների օրինական ուժի մեջ մտնելու ժամկետը, ինչպես նաև կարգավորվել են Օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու ու այն վճռաբեկության կարգով բողոքարկելու հարցերը.

13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի նմանությամբ Օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի և վերաքննիչ դատարանում բողոքարկված՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների քննության եռամսյա ժամկետ.

14. Օրենսգրքի 187-րդ և 188-րդ հոդվածներով կարգավորվել են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումը վարույթ ընդունելու և վերադարձնելու հետ կապված հարցեր.

15. Օրենսգիրքը լրացվել է նոր՝ 188.1-ին հոդվածով, որով նախատեսվել է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումը վերաքննիչ դատարանի կողմից վարույթ ընդունելը մերժելու, իսկ վճռաբեկ դատարանի կողմից նաև առանց քննության թողնելու հնարավորություն: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 423-րդ հոդվածի համանմանությամբ հղում է կատարվել համապատասխանաբար վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժելու և առանց քննության թողնելու՝ Օրենսգրքով նախատեսված հիմքերին և կարգին.

16. Սահմանադրական դատարանի 16.04.2024 թվականի թիվ ՍԴՈ-1725 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Օրենսգրքի 195-րդ հոդվածով նախատեսվել է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը բողոքարկելու հնարավորություն: Համապատասխան դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու և բողոքարկելու ժամկետներն ու կարգը սահմանելիս հիմք են ընդունվել վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին որոշման համար նախատեսված իրավակարգավորումները՝ հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանը համեմատական վերլուծություն իրականացրել էր նախնական իրավական պաշտպանության այդ միջոցի հետ.

17. Օրենսգրքով նախատեսվում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերի քննությունն իրականացնել կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով: Նշված օրենսդրական փոփոխությունը կնպաստի դատական գործերի առավել սեղմ ժամկետներում քննությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական դատարանը ներկայումս բավականաչափ ծանրաբեռնված է և գրեթե անհնարին է ապահովել դատական նիստերի միջև սովորաբար առկա միջակայքի համեմատ առավել մեծ հաճախականություն: Հետևաբար, նշված գործերով վարչական դատարանի կազմը 5-ի փոխարեն 3 դատավորի կազմով սահմանելու պարագայում էականորեն կքչանան այն իրավիճակները, երբ կոլեգիալ կազմում ընդգրկված դատավորներից մեկի՝ նիստին մասնակցելու հնարավորություն չունենալու հանգամանքը հանգեցնի դատական նիստի չկայացման, դրա հետաձգման և մեկ այլ հերթի նշանակման: Այդպիսով որոշակիորեն կթեթևանա նաև դատավորների ծանրաբեռնվածությունը.

18. Նախագծով առաջարկվում է ոստիկանության ծառայողին կամ զինծառայողին վիրավորելու, ինչպես նաև ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար նախատեսված վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերապահել Ներքին գործերի նախարարությանը:

Նշված իրավախախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու հարցերի քննությունը նպատակահարմար է վերապահել համապատասխան ոլորտում գործունեություն իրականացնող վարչական մարմնին, ինչը կնպաստի իրավախախտման հանգամանքների արդյունավետ ու արագ հայտնաբերմանը, ինչպես նաև վարչական վարույթի օպերատիվությանը, քանի որ ոլորտում

մասնագիտացված վարչական մարմինները լավագույնս տեղեկացված են տվյալ բնագավառի նորմատիվ պահանջներից ու գործառույթներից:

Միաժամանակ, անձանց ընձեռվում է նշյալ վարույթներով կայացված վարչական ակտերը բողոքարկելու հնարավորություն, որպիսի հանգամանքը կարող է զուգահեռաբար լուծել վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորության պատշաճ իրացումը՝ անձի համար բավարար երաշխիքներ ապահովելով հանդերձ, մյուս կողմից՝ նախ իրավունքի առավել արագ ու դյուրին կառուցակարգով պաշտպանությանը, ապա նաև նպաստել վարչական դատարանի բեռնաթափմանը:

19. Նախագծով առաջարկվում է նաև փոփոխել Օրենսգրքի 64.4-րդ հոդվածը, որպիսի փոփոխության արդյունքում բոլոր դատական գործերը, այդ թվում՝ հայցադիմումը թղթային տարբերակով ներկայացած լինելու պարագայում, դառնալու են էլեկտրոնային՝ Օրենսգրքով նախատեսված բացառությունների հաշվառմամբ: Նախագծով առաջարկվում է նաև լուծել մի շարք հարցեր, որոնք առնչվում են վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի կիրառմանը:

3. Ակնկալվող արդյունքը.

Առաջարկվող փոփոխություններով և լրացումներով ակնկալվում է.

- Օրենսգրքում առկա իրավակարգավորումները համապատասխանեցնել իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումներին՝ հիմք ընդունելով դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները,

- ապահովել իրավական նորմերի միատեսակ կիրառությունը՝ այդ կերպ նպաստելով կանխատեսելիության և իրավական որոշակիության սկզբունքների կենսագործմանը,

- դատավարական ընթացակարգերի պարզեցման և հստակեցման միջոցով նվազեցնել վարչական դատարանի ծանրաբեռնվածությունն ու ապահովել դատական ռեսուրսների նպատակային բաշխումը,

- ապահովել գործերի արդյունավետ և արագ քննությունը՝ երաշխավորելով ողջամիտ ժամկետում գործի քննության անձանց իրավունքը,

- նպաստել վարչական վարույթում վարչական մարմինների դերի ամրապնդմանը՝ ապահովելով մասնագիտական որոշումների կայացման բարձր մակարդակ և իրավաչափություն,

- կատարելագործել օրենսդրությունը՝ իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած օրենսդրական բացերի և անորոշությունների վերացման և իրավական կարգավորումների համապարփակ արդիականացման միջոցով,

- Օրենսգրքով սահմանված բացառությունների հաշվառմամբ՝ ապահովել բոլորը վարչական գործերի քննությունն էլեկտրոնային եղանակով և վերացնել առկա խոչընդոտները:

4. Նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագծերի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծերի ընդունումը բխում է Կառավարության 21.07.2022 թվականի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության 7-րդ նպատակից (վարչական և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումներ):

6. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված մարմինները կամ անձինք.

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության և «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից: